ՍՈՎԵՏԱՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1905—1907 ԹԹ. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ, ԴԵՐԵՆԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ, ՊԱՎԼՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Իմպերիալիզմի դարաշրջանի առաջին ժողովրդական հեղափոխության ուսումնասիրությունն ունի գիտական և քաղաքական կարևոր նշանակություն։ Պատահական չէ, որ Վ. Ի. Լենինը բազմիցս ընդգծել է այդ հեղափոխության փորձը համակողմանիորեն ու մանրակրկիտ ուսումնասիրելու, նրա պայքարի ձևերն ու մարտական ավանդույթները պրոպագանդելու անհրաժեշտությունը։

1905—1907 թթ. ռուսաստանյան առաջին հեղափոխությունն իր ոլորտի մեջ առավ նաև երկրի ծայրամասերում բնակվող ժողովուրդներին, այդ թվում և հայ ժողովրդին։ Հեղափոխությունը մեծ ազդեցություն ունեցավ ծայրամասերի ժողովուրդների ինչպես սոցիալ-քաղաքական, այնպես էլ հասարակական կյանքի զարգացման վրա։ Հետևաբար, 1905—1907 թթ. Ռուսաստանի ծայրամասերում, այդ թվում և Արևելյան Հայաստանում, տեղի ունեցած իրադարձությունների, այնտեղ բնակվող ժողովուրդների մղած սոցիալական ու ազգային-ազատագրական պայքարի պատմության ուսումնասիրությունը ևս սովետական պատմագիտության առաջնահերթ խնդիրներից է։

Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացումը, ռուսական կայսրության մյուս ծայրամասերի համեմատությամբ, ուներ իր առանձնահատկությունները։ Դրանք արտահայտվում էին Ռուսաստանի ոչ միայն հեռավոր ծայրամասերի, այլև հարևան Վրաստանի ու Ադրբեջանի համեմատությամբ։ XIX դ. վերջին և XX դ. սկզբին Արևելյան Հայաստանում արդյունաբերությունը թույլ էր զարգացած։ Արդյունաբերական հիմնական շրջաններն ու բանվորական կենտրոններն էին Ալավերդու և Ղափանի պղնձահանքերն ու պղնձաձուլական գործարանները։ Դրանցում կենտրոնացած էր շուրջ 7 հազար բանվոր, իսկ ամբողջ Արևելյան Հայաստանում բանվորների թիվը հասնում էր 15 հազարի։ Հայ բնակչության հոծ զանգվածներ էին բնակվում Ադրբեջանում և Վրաստանում։ Վերջիններիս արդյունաբերական գլխավոր կենտրոնները՝ Բաքուն, Թիֆլիսը և Բաթումը, դեպի իրենց էին ձգում նաև Հայաստանի քայքայվող գյուղացիական զանգվածներին։ XX դ. սկզբներին Ադրբեջանում ու Վրաստանում կար շուրջ 70 հազար հայ բանվոր[1]։ Ադրբեջանի և Վրաստանի հայկական բնակչությունն ակտիվորեն մասնակցում էր երկրամասի հեղափոխական շարժումներին, իսկ Հայաստանի հեղափոխական շարժումները սերտորեն կապված էին Անդրկովկասի աշխատավորական զանգվածների մղած պայքարի հետ։ Ահա թե ինչու միանգամայն պատճառաբանված է այն պարապան, որ Արևելյան Հայաստանում 1905—1907 թթ. ծավալված հեղափոխական շարժումներն ուսումնասիրվել և ուսումնասիր-

[1] Հայ բանվորների թանակի մասին տվյալները հաշվարկված են արխիվային և հրապարակված այլևայլ տվյալների համեմատական վերլուծության հիման վրա։

վում են Անդրկովկասի և Ռուսաստանի հեղափոխական շարժումների հետ սերտորեն շաղկապված։

Անդրկովկասը, լինելով Ռուսաստանի հետամնաց ծայրամասերից մեկը, իր տնտեսական, քաղաքական և հասարակական պարագայմամբ ուներ որոշակի առանձնահատկություններ։ Այդ պատճառով էլ ռուսաստանյան առաջին հեղափոխության տարիներին Հայաստանում ծավալված սոցիալական շարժումները, դրանց բնույթը հասկանալու և արժեքավորելու համար անհրաժեշտ է հաշվի նստել նշված առանձնահատկությունների հետ։

Գրականության մեջ տարբեր մոտեցում է ցուցաբերվում Արևելյան Հայաստան պատմաաշխարհագրական հասկացողության տարածքային սահմանների խնդրում։ Կարծում ենք, որ միանգամայն ճիշտ են այն հեղինակները, որոնք Արևելյան Հայաստան ասելով նկատի են առնում Երևանի նահանգը, Կարսի մարզը, Թիֆլիսի և Ելիզավետպոլի նահանգների բուն հայկական տարածքները։

1905—1907 թթ. Հայաստանում ծավալված հեղափոխական շարժումների պատմության սիստեմատիկ ուսումնասիրությունը համեմատաբար վերջերս է սկսվել։ Հայաստանում սովետական իշխանության առաջին երկու տասնամյակներում՝ 1920—1930-ական թվականներին, հայ պատմագիտությունը, կարելի է ասել, չէր զբաղվում դարասկզբին տեղի ունեցած հեղափոխական իրադարձությունների հետազոտությամբ։ Այդ տարիներին նոր շրջանի պրոբլեմների ուսումնասիրողներին առաջին հերթին հետաքրքրում էին պատմական կարևորագույն նշանակություն ունեցող իրադարձությունների՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար մղված պայքարի դրվագները, որոնց թարմ տպավորության տակ էին գտնվում հետազոտողները և որոնց մի մասն էլ պատմական այդ դեպքերի անմիջական մասնակիցն էր։ Ուսումնասիրողներից բացառություն է կազմում միայն Ե. Մելիք-Յոլչյանը, որը 1905—1907 թթ. հեղափոխության տարիներին և նախօրյակին Հայաստանում տեղի ունեցած բանվորական շարժումներին է նվիրել հատուկ աշխատություն[2]։ Նրա ուսումնասիրությունը, փաստորեն, սովետահայ պատմագիտության մեջ ռուսական առաջին հեղափոխության տարիներին Հայաստանում կատարված իրադարձությունները լուսաբանելու գիտական առաջին լուրջ փորձն է։ Այդ աշխատությունը, որպես անդրանիկ գործ արժեքավոր լինելով հանդերձ, զերծ չէ նաև էական թերություններից, որոնք հիմնականում պայմանավորված են գիտական հարցերի ուսումնասիրության այն ժամանակվա մակարդակով։ Ե. Մելիք-Յոլչյանի գրքում կան փաստական անճշտություններ, իսկ որոշ սկզբունքային նշանակություն ունեցող հարցեր էլ մեկնաբանվում են միակողմանիորեն, անգամ սխալ տեսանկյունից։ Այսպես, օրինակ, հեղինակը, սահմանափակվելով միայն բանվորական շարժումների քննությամբ, դրանք չի դիտում անդրկովկասյան և համառուսական իրադարձությունների ընդհանուր կապակցության մեջ։

Ե. Մելիք-Յոլչյանի գրքից մեկ տարի առաջ՝ 1923 թ., լույս էր տեսել Կովկասի հեղափոխական շարժումների և սոցիալ-դեմոկրատիայի պատմությանը նվիրված Ս. Արկոմեդի (Գ. Ղարաջյան) աշխատությունը՝ Գ. Պլեխա-

---

2 Ե. Մելիք-Յոլչյան, Չորս տարի Հայաստանի բանվորական շարժման պատմության (1903—1907), Երևան, 1924։

նովի առաջաբանով[3]։ Դրանում հեղինակը բանվորական շարժումներից զատ անդրադարձել է նաև գյուղացիական հարցին ու շարժումներին և լայն կտավի վրա լուսաբանել սոցիալ-դեմոկրատիայի գործունեությունը։ Սակայն Ս. Արկոմեդն իրեն զբաղեցնող խնդիրները հետազոտել է ամբողջ երկրամասի մասշտաբով, ուստի և նրա գրքում Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները, բնականաբար, բավարար ուշադրության չեն արժանացել։ Բացի այդ, բանվորական և գյուղացիական շարժումների ու սոցիալ-դեմոկրատիայի առաջացման հարցերի պատմությունը սկսելով XIX դ. 80-ական թվականներից, նա այն հասցրել է հիմնականում մինչև առաջին հեղափոխության նախօրյակը՝ 1903 թ., սակավ դեպքերում անդրադառնալով 1905—1907 թթ. դեպքերին։

1940-ական թվականներին և 1950-ական թվականների սկզբներին սովետահայ պատմագիտության ընդհանուր առաջընթացը որոշ չափով իր ոլորտի մեջ առավ նաև խնդրո առարկա պրոբլեմը։ Այդ ժամանակաշրջանում հեղափոխական շարժումների առանձին հարցեր առավել կամ նվազ չափով սկսեցին լուսաբանվել հիմնականում պատմահեղափոխական և պատմակուսակցական հետազոտություններում և հատկապես ականավոր հեղափոխականներ Ս. Շահումյանի և Ս. Սպանդարյանի կյանքին ու գործունեությանը նվիրված ուսումնասիրություններում։ Ագրարային հարաբերությունների և գյուղացիական շարժումների հարցերն արտացոլվեցին Ա. Մարուխյանի[4] և Օ. Հովհաննիսյանի[5] ուսումնասիրություններում, ինչպես նաև Վ. Ռշտունու կազմած արխիվային փաստաթղթերի ժողովածուում[6]։ Նշված աշխատությունները բնութագրելիս նկատի պետք է առնել, որ 1930—1940-ական թվականներին պատմագիտությունը կրում էր անհատի պաշտամունքի բացասական ազդեցությունը, շրջանառության մեջ չէին դրված պատմագիտական արժեք ունեցող բոլոր նյութերն ու փաստաթղթերը, իսկ Անդրկովկասի հեղափոխական շարժումների որոշ հարցերի լուսաբանումն էլ միակողմանի, սուբյեկտիվ բնույթ էր կրում։

Ռուսաստանյան առաջին հեղափոխության պատմության գիտական ուսումնասիրության բնագավառում նոր փուլ սկսվեց 1950-ական թվականների կեսերից։ Հեղափոխության 50-ամյա հոբելյանի նախապատրաստումն ու տոնակատարությունը նոր թափ հաղորդեցին ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ ազգային հանրապետություններում գիտահետազոտական աշխատանքների ծավալմանը։

1950-ական թվականներին և հատկապես ՍՄԿԿ XX համագումարից անմիջապես հետո հրատարակվեցին հեղափոխությանը նվիրված մենագրու-

---

[3] С. Т. Аркомед, Рабочее движение и социал-демократия на Кавказе, М.—П., 1923.

[4] Ա. Մարուխյան, Գյուղացիության դրությունը նախասովետական Հայաստանում 1900—1920 թթ., Երևան, 1948։

[5] Օ. Մ. Հովհաննիսյան, Ագրարային հարցը Երևանի նախկին նահանգում 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին, Երևան, 1949։

[6] «Аграрная политика царизма и крестьянское движение в Армении в начале XX века», составил проф. В. Рштуни, при участии К. Степаняна, Ереван, 1952.

թյուններ ու ժողովածուներ[7]։ Դրանցում լուսաբանվում է Արևելյան Հայաստանի տնտեսական և սոցիալական վիճակը XIX դ. վերջին և XX դ. սկզբին, ցույց է տրվում, որ տնտեսական կյանքում սկսված տեղաշարժերի հետևանքով Հայաստանում առաջանում են քիչ թե շատ նշանավոր առևտրաարդյունաբերական կենտրոններ և կազմավորվում են բուրժուազիան ու հասարակական նոր, ամենահեղափոխական դասակարգը՝ պրոլետարիատը։ Այդ աշխատություններում միաժամանակ բայահայտվում են բանվորների տնտեսական և իրավաքաղաքական ծանր դրությունը, կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով գյուղի շերտավորման ու քայքայման պրոցեսը։ Այլ խոսքով՝ դրանցում վեր են հանվում սոցիալ-քաղաքական այն նախադրյալները, որոնք հիմք հանդիսացան հեղափոխական շարժումների համար։ Միաժամանակ, վերոհիշյալ հրատարակություններում վեր է հանվում հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գործունեությունն աշխատավորության սոցիալական պայքարը կազմակերպելու ու նպատակամղելու ուղղությամբ։ Դրանով փաստորեն մերկացվում է հայ բուրժուական պատմագիտության այն միտումը, նրա այն տեսակետի սնանկությունը, ըստ որի, իբր Հայաստանում հեղափոխական շարժումների համար հող չի եղել, որ հայ ժողովրդին ինչպես 1905—1907 թթ., այնպես էլ դրանից հետո հուզել է ոչ թե դասակարգային, այլ միայն ազգային պայքարը։ Գնահատելի է այն, որ բուրժուական պատմագիտության նման հակագիտական տեսակետները հերքվում են ոչ թե ընդհանուր խոսքերով ու հայտարարություններով, այլ անառարկելի փաստերով, Հայաստանի աշխատավորական զանգվածների հեղափոխական շարժումների խոր ու բազմակողմանի լուսաբանմամբ։

1955 թ. հրատարակվեցին նաև հոդվածների երկու ժողովածուներ[8], որոնցում լուսաբանվում են ռուսաստանյան առաջին հեղափոխության համաշխարհային պատմական նշանակությունը, նրա խոր ազդեցությունը միջազգային հեղափոխական շարժումների վրա։ Դրանցում վեր է հանվում բանվորական և գյուղացիական շարժումների, բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության պատմությունը, ցույց են տրվում սովորող երիտասարդության շրջանում և Հայաստանում գտնվող զինվորական զորամասերում բռնկված հուզումները։

Ինչպես հայտնի է, 1905—1907 թթ. հեղափոխությունն ալեկոծեց նաև Մերձավոր ու Միջին արևելքի երկրները՝ հասնելով մինչև հեռավոր Չինաս-

---

7 Ս. Ադայան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., Երևան, 1955, Վ. Պարսամյան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում, 1905—1906 թթ., Երևան, 1955։ Գ. Հարությունյան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում, 1905—1907 թթ., Երևան, 1956, Հ. Բ. Արտյոնյան, Народы Закавказья в борьбе против царизма в годы первой русской революции, Ереван, 1957, Ս. Մելիքյան, Մարքսիստական կազմակերպությունները և ռևոլյուցիոն շարժումները Լոռում (1899—1908), Երևան, 1957, Д. Габриелян, Революция 1905—1907 гг. в Армении («Революция 1905—1907 гг. в национальных окраинах России (сборник статей)», М.,1955)

8 «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին», Երևան, 1955, «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ.», Երևան, 1955։

տան։ Գ. Հարությունյանի և Տ. Հակոբյանի աշխատություններում[9] ցույց է տրվում ռուսական առաջին հեղափոխության ազդեցությունը Հայաստանի հարևան Իրանի վրա, Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների օգնությունը Իրանի հեղափոխական ուժերին՝ շահական ռեժիմի դեմ նրանց պայքարում, ինչպես նաև հայերի, վրացիների, ռուսների, ադրբեջանցիների մասնակցությունը 1905—1911 թթ. իրանական հեղափոխությանը։

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Թուրքիայում ծավալված շարժումներին, մասնավորապես Արևմտյան Հայաստանում սկսված քաղաքային-աշխատավորական և գյուղացիական հուզումներին են անդրադարձել Ե. Սարգսյանը և Ա. Համբարյանը[10]։

Հայտնի է, որ հեղափոխական շարժումների գիտական լուսաբանման համար կարևոր նշանակություն ունի արխիվային փաստաթղթերի և նյութերի հրատարակությունը։ Վերոհիշյալ առումով էլ 1955 թ. ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի և Հայաստանի կենտրոնական պետական արխիվի պատրաստած նյութերի ու փաստաթղթերի ժողովածուի հրապարակ գալը[11] որոշակի երևույթ էր։ Այդ ժողովածուի շնորհիվ գիտական շրջանառության մեջ դրվեցին հսկայական քանակությամբ փաստաթղթեր ու նյութեր, որոնք հնարավորություն ընձեռեցին լիարժեք պատկերացում կազմելու հեղափոխական շարժումների, դրանց մանրամասների մասին։ Հայտնի դարձան հանիրավի մոռացության տրված կամ ըստ արժանվույն չգնահատված հեղափոխության շատ գործիչների, շարքային հերոսների անուններ։

Հայաստանի պատմությանը վերաբերող հետաքրքիր նյութեր են տպագրվել նաև կենտրոնական հրատարակություններում[12]։ Նյութերի և փաստաթղթերի ժողովածուների շարքում կարևոր է նաև Խ. Բարսեղյանի հրատարակած «Հեղափոխական կոչեր ու թռուցիկներ» ժողովածուն[13]։

Որոշ հեղինակներ շոշափել են նաև պատմագիտական գրականության մեջ այս կամ այն պատճառով ուշադրության չարժանացած հարցեր։ Այսպես, օրինակ, Ծ. Աղայանն անդրադարձել է ցարիզմի հրահրած հայ-ադրբեջանական ընդհարումներին։ Նա ցույց է տվել ականավոր բոլշևիկներ Ս. Շահում-

---

[9] Г. С. Арутюнян, Иранская революция 1905—1911 гг. и большевики Закавказья, Ереван, 1956, Տ. Հ. Հակոբյան, Ռուսական առաջին հեղափոխության ազդեցությունը Իրանի վրա, Երևան, 1957։

[10] Е. К. Саркисян, Влияние русской революции 1905—1907 гг. на развитие революционного движения в Турции (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1955, № 12), Ա. Ս. Համբարյան, Հեղափոխական շարժումները Արևմտյան Հայաստանի քաղաքներում 1905—1908 թթ. (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1975, № 7)։

[11] «Революционное движение в Армении 1905—1907 гг. (сборник документов и материалов)», под ред. А. Н. Мнацаканяна, Ереван, 1955.

[12] «Начало первой русской революции, январь-март 1905 г. (сборник документов и материалов)», М., 1955; «Всероссийская политическая стачка в октябре 1905 г. (документы и материалы)», ч. I, ч. II, М.—Л., 1955; «Листовки Кавказского Союза РСДРП, 1903—1905», М., 1955; «Листовки московских большевиков в период первой русской революции», М., 1955; «Большевики во главе Всероссийской политической стачки (сборник документов и материалов)», М., 1955; «Высший подъем революции 1905—1907 гг. (документы и материалы)», ч. I, М., 1955.

[13] «Հեղափոխական կոչեր և թռուցիկներ (1902—1921)», կազմեց և խմբագրեց Խ. Հ. Բարսեղյան, Երևան, 1960։

յանի, Ա. Ջափարիձեի, Մ. Ազիզբեկովի, Պ. Մոնտինի և շատ ուրիշների գործադրած ջանքերը՝ հայ-ադրբեջանական ժողովուրդների բարեկամությունն ամրապնդելու գործում։ Ս. Աղայանն ուշագրավ ձևով շարադրել է նաև հայ և ադրբեջանցի նշանավոր գրողներ Հ. Թումանյանի, Ա. Իսահակյանի, Ղ. Աղայանի, Ջ. Ջաբարլիի, Ջ. Մամեդկուլիզադեի, Ա. Սաբիրի և ուրիշների ակտիվ գործունեությունը՝ հարևան ժողովուրդների միջև սկսված եղբայրասպան ընդհարումները վերջ տալու համար։ Նա անդրադարձել է նաև հայ դեմոկրատական դրականության, արվեստի տարբեր ճյուղերի և առհասարակ հայ հասարակական մտքի զարգացման վրա հեղափոխության ունեցած ազդեցության հարցերին։

Արևելահայ գյուղում կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը նվիրված իր ուսումնասիրության մեջ Ա. Համբարյանը ուրվագծում է նաև XX դ. սկզբին Հայաստանում տեղի ունեցած գյուղացիական ընդվզումները[14]։

Անառարկելի փաստ է, որ 1950-ական թվականների կեսերին առաջընթաց խոշոր քայլ կատարվեց ռուսական առաջին հեղափոխության պատմության համակողմանի ուսումնասիրության ուղղությամբ։ Այդուհանդերձ, նկատելի են որոշ թերություններ, որոնք բնորոշ են համարյա թե բոլոր ուսումնասիրություններին։ Այսպես, 1905—1907 թթ. հեղափոխությանը նվիրված աշխատություններում, սակավ բացառությամբ, շատ հն ընդհանուր դատողությունները, հանրահայտ փաստերի, իրողությունների կրկնությունը։ Տեղական բնույթի հարցերը նկարագրելու համար հաճախ համառուսական իրադարձություններին տրվում է այնքան մեծ տեղ, որ բուն նյութը տարրալուծվում, կորչում է նրա մեջ։ Բանն այն է, որ հեղափոխությունն ամբողջ Ռուսաստանում միևնույն հունով ընթանալով հանդերձ յուրաքանչյուր ազգային շրջանում ունեցել է իր յուրահատկությունը՝ կախված տվյալ երկրամասի տնտեսական-քաղաքական կյանքի զարգացման աստիճանից, աշխատավորության իրավազրկության ու շահագործման կոնկրետ չափից, պրոլետարիատի և սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հասարակական կշռից ու քաղաքական հասունությունից, ազգային հարաբերություններից և այլն։ Այդ իսկ պատճառով ռուսական կայսրության ազգային ծայրամասերի պատմության հետազոտողից առաջին հերթին պահանջվում է վեր հանել հեղափոխական շարժման այս կամ այն առանձնահատկությունը, նրա դրսևորման յուրահատկությունները և ոչ թե փաստորեն այն փոխարինել Ռուսաստանի պատմությունից վաղուց արդեն հայտնի դրույթների կրկնությամբ։

Երբեմն ուսումնասիրողները պատմական իրողությունն ամբողջությամբ ներկայացնելու, բարդ իրադարձություններին մարքսիստական բացատրություն տալու փոխարեն բավարարվում են սոսկ եղելությունը միակողմանիորեն արձանագրելով։ Այդ տեսակետից բնորոշ է մասնագետների մոտեցումն ու նրանց տված մեկնաբանությունն Ալավերդու պղնձահանքերի բանվորների 1906 թ. օգոստոսի գործադուլին։ Հայտնի է, որ Ս. Սպանդարյանը և Ս. Շահումյանը կովկասյան բոլշևիկյան կենտրոնի հանձնարարությամբ մասնակցել են գործադուլին։ Նրանք, ելնելով երկրամասի ընդհանուր իրավիճակից

---

14 А. С. Амбарян, Развитие капиталистических отношений в армянской деревне, Ереван, 1959.

և այն հանգամանքից, որ հեղափոխությունը վսյրէջը էր ապրում և հետզհետե ուժեղանում էր ցարական ռեակցիան, գործադուլավորներին խորհուրդ էին տալիս բավարարվել այն վիճումներով, որ անում էր գործարանի վարչությունը։ Բանվորները չեն լսում նրանց, որի պատճառով էլ գործադուլը ճնշվում է, իսկ իրենք էլ խստորեն պատժվում են։

Վերադառնալով Թիֆլիս, Ս. Շահումյանը բոլշևիկյան «Նոր խոսք» թերթում տպագրում է «Անհաջող գործադուլը» խորագրով հոդվածը։ Դրանում նա գործադուլի պարտության պատճառը համարում է բանվորների ցածր քաղաքական գիտակցությունը, թույլ կազմակերպվածությունը, գործադուլին դիմանալու համար անհրաժեշտ նյութական միջոցների բացակայությունը, ինչպես նաև այն, որ գործադուլավորները բանակցությունների ժամանակ չլսեցին սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչներին։ Չնայած այդ ամենին, ուսումնասիրողները (բացառությամբ Խ. Բարսեղյանի, Հ. Հարությունյանի, մասամբ Բ. Օհանջանյանի) չեն հիշատակում գործադուլին Ս. Շահումյանի տված գնահատականը, խուսափում են գրել բանվորների սխալների մասին։ Նրանք, հավանաբար, չեն ուզում ընդունել, որ գործադուլը, որին մասնակցում էր 4500 մարդ, կարող էր և վատ կազմակերպված լինել։

1950-ական թվականների հրատարակություններում հաճախ ցույց չի տրվում կամ շատ անբավարար է լուսաբանվում բոլշևիկների առաջ ծառացած դժվարությունները՝ ներկուսակցական պայքարի, աշխատավորությանը բուրժուական կուսակցությունների ազդեցությունից դուրս բերելու, ցարիզմի դեմ ոտքի հանելու գործում և այլն[15]։

Ռուսաստանյան առաջին հեղափոխության ուսումնասիրումը շարունակվեց նաև 1960—1970-ական թվականներին։ Խորացվեց Հայաստանի և Անդրկովկասի հեղափոխական շարժումների հետ կապված առանձին հարցերի հետազոտումը։ Առավել մեծ ուշադրություն դարձվեց քաղաքացիական պատմության խնդիրների, երկրամասի XX դ. սկզբների հասարակական-քաղաքական այն ընդհանուր միջավայրի վրա, որն առնչվում էր սոցիալական հակամարտությունների ու պայքարի հետ։ Այսպես, օրինակ, Դ. Մուրադյանը[16] 1905—1907 թթ. իրադարձությունները քննել է հայ լիբերալ բուրժուազիայի «օպոզիցիոն» տրամադրությունների դրսևորման, փոխարքայության վերականգնման ու դումայական ընտրությունների հետ սերտորեն առնչված։ Գ. Գալոյանը[17] բանվորական շարժումները հետազոտել է հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները և երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը բացահայտելու տեսանկյունից։ Նա ծանրացել է համեմատաբար թույլ լուսաբանված այնպիսի հարցերի վրա, ինչպիսիք են հայկական եկեղեցու գույքի բռնագրավման մասին 1903 թ. հունիսի 12-ի ցարական օրենքի առթիվ բռնկված հուզումները, երկրամասի ժողովուրդների ազատագրական շարժումները խոտորելու և ազգային թշնամանք սերմանելու

---

15 Վ. Բարխուդարյան, Նոր աշխատություններ 1905—1907 թթ ռևոլյուցիոն շարժումների մասին (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1956, № 6)։

16 Դ. Ա. Մուրադյան, Հայաստանը ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին (1905—1907), Երևան, 1964։

17 Г. А. Галоян, Рабочее движение и национальный вопрос в Закавказье (1900—1922). Ереван, 1969.

ցարիզմի փորձերի դեմ բոլշևիկների ծավալած պայքարը։ Վ. Երկանյանն իր աշխատության մեջ քննում է հեղափոխության ազդեցությամբ դեմոկրատական մտավորականության մղած պայքարը հայկական դպրոցների իրավունքների ճանաչման համար[18]։ Հ. Հարությունյանը[19] շեշտված ձևով հետազոտել է հատկապես Հայաստանի աշխատավորության սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, ցարիզմի վարած քաղաքականությունը և դրանով իսկ վեր հանել հեղափոխության հասունացման օբյեկտիվ պայմանները։ Հ. Վարդանյանը հետաքրքրություն է դարձրել հեղափոխության տարիներին հայ բուրժուական կուսակցությունների դիրքորոշման լուսաբանումը[20]։ Նա առանձին-առանձին քննել է դաշնակցականների, հնչակյանների և սոցիալիստների քաղաքականությունը, մերկացրել հեղափոխության ընդհանուր շահերին անհարիր նրանց նեղ, ազգայնական գործունեությունը։ Սակայն, ցավոք, աշխատության մեջ փաստական կոնկրետ նյութի վերլուծության հիման վրա կատարվող հետևությունները երբեմն փոխարինվել են հրապարակախոսական մերկապարանոց դատողություններով։

Հայաստանում 1905—1907 թթ. ծավալված հեղափոխական շարժումների առանձին հարցերի պատմությունը լուսաբանվել են նաև հայ ժողովրդի, ինչպես նաև Անդրկովկասի ու Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների պատմությանը նվիրված ընդհանրացնող աշխատություններում[21]։

Չնայած այն հանգամանքին, որ վերջին երկու-երեք տասնամյակներում մեզ հետաքրքրող պրոբլեմը եղել է սովետահայ պատմագիտության ուշադրության կենտրոնում, այնուամենայնիվ, կան ոչ քիչ թվով հարցեր, որոնք պատմագիտության արդի պահանջների մակարդակով կարիք ունեն լրացուցիչ ուսումնասիրության։ Այսպես, օրինակ, գրեթե բոլոր հեղինակներն էլ Արևելյան Հայաստանում Վրաստանի և Ադրբեջանի համեմատությամբ հեղափոխական շարժումների թույլ լինելը բացատրում են միայն արդյունաբերության զարգացման ցածր մակարդակով, պրոլետարիատի թույլ ու սակավաքանակ լինելով և դրա հետ կապված այլ հանգամանքներով։ Նրանք բոլորն էլ, սակայն, անտեսում են պատմական այն իրողությունը, որ Ռուսաստանի հայկական ազգաբնակչության ուշադրությունը միաժամանակ կենտրոնացած էր Թուրքիայում գտնվող իրենց ազգակիցների ծանր դրության վրա։ Ինչպես հայտնի է, Արևմտյան Հայաստանում ապրում էր հայության մեծ մասը, որտեղ նա ենթարկվում էր անլուր հալածանքների ու ցեղասպանության։ Եվ որքան էլ ծանր լիներ սոցիալական ու ազգային ճնշումը Ռուսաստանում, այն չէր կարող համեմատվել Թուրքիայի հայ աշխատավորության վիճակի հետ։

---

18 Վահե Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870—1905), Երևան, 1970։

19 А. М. Арутюнян, Революционное движение в Армении в 1905—1907, Ереван, 1970.

20 Հ. Գ. Վարդանյան, Հայ բուրժուա-ազգայնական կուսակցությունների դիրքորոշումը ռուսական առաջին հեղափոխության տարիներին, 1905—1907 թթ., Երևան, 1975։

21 Մ. Գ. Ներսիսյան, Հայաստանը 1905—1907 թթ. հեղափոխության տարիներին («Հայ ժողովրդի պատմություն», մաս 2, Երևան, 1957), Վ. Ա. Պարսամյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1967, «Очерки истории Коммунистической партии Армении», Ереван, 1967, «Очерки истории Коммунистических организаций Закавказья», ч. I, Тбилиси, 1967.

Այս հանգամանքն իր որոշակի կնիքն էր դնում արևելահայ իրականության մեջ տեղի ունեցող շարժումների վրա։

Մինչև այժմ մենք չունենք հայ քաղաքական կուսակցությունների մասին ամբողջական ուսումնասիրություններ։ Մինչդեռ անհրաժեշտ է բոլոր տեսակի փաստերի ու նյութերի հիման վրա համակողմանի լուսաբանել հայ բուրժուական կուսակցությունների գործունեությունը, հեղափոխության տարբեր փուլերում նրանց դիրքորոշումը։ Ավելին, 1906 թ. ձևավորված կադետական բնույթ ունեցող հայ լիբերալ բուրժուական կուսակցության՝ «սահմանադրական-դեմոկրատական կուսակցության հայկական ֆրակցիայի» գործունեությունն առհասարակ դուրս է մնացել հետազոտողների տեսադաշտից։

Հեղափոխության ժամանակ ցարիզմի հրահրած հայ-ադրբեջանական ընդհարումները ցնցող տպավորություն գործեցին ինչպես Անդրկովկասի հայկական և ադրբեջանական շրջանների, այնպես էլ ամբողջ Ռուսաստանի առաջադեմ խավերի վրա։ Այս խնդրի բազմակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն կընձեռեր լուսաբանելու պրոլետարիատի քաղաքական հասունության աստիճանը, տարբեր կուսակցությունների ու հոսանքների դիրքորոշումը և առհասարակ հեղափոխական շարժումների հետ առնչվող շատ հարցեր։

Ռուսաստանյան առաջին հեղափոխության պատմությամբ զբաղվող հետազոտողները, որպես կանոն, շրջանցել կամ անբավարար ուշադրություն են դարձրել նաև Արևելյան Հայաստանի ազգային-ազատագրական շարժումների վրա։ Ինչպես հայտնի է, հայկական եկեղեցու գույքի բռնագրավման մասին 1903 թ. ցարական օրենքը լենինյան «Իսկրան» բնութագրել է որպես «նոր Քալան»[22], Փաստորեն հայկական դպրոցների ու լուսավորական հիմնարկների պահպանման ու գոյատևման նպատակին ուղղված այդ շարժումը, որը բնույթով ազգային էր, շարունակվեց նաև հեղափոխության տարիներին։ Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան ողջունում էր այդ շարժումը, իսկ պատմաբանները կարծես թե երկյուղում են այն հանգամանքից, որ ազգային շարժման առկայությունն ընդունելը կամա թե ակամա կարող է նսեմացնել տեղական ազգայնականների դեմ հայ բոլշևիկների մղած պայքարի նշանակությունը։

Ուսումնասիրության կարոտ է նաև հայ հասարակական մտքի վրա հեղափոխության ունեցած ազդեցության համակողմանի լուսաբանումը։

Անհրաժեշտ է ձեռնարկել փաստաթղթերի և նյութերի ժողովածուի վերահրատարակման գործը, քանի որ հայտնաբերվել են նոր նյութեր։ Դրանից դատ, նշված ժողովածուից դուրս են մնացել արժեքավոր նյութեր, իսկ որոշ փաստաթղթեր էլ զետեղվել են անհարկի կրճատումներով։ Դժբախտաբար, խնդրո առարկա հարցին նվիրված միութենական հրատարակություններում հանդիպում են սխալներ և միակողմանի մեկնաբանություններ։ Այսպես, Մոսկվայում լույս տեսած «Համառուսաստանյան քաղաքական գործադուլը 1905 թ. հոկտեմբերին»[23] փաստաթղթերի և նյութերի ժողովածուի երկու մա-

---

22 «Իսկրա», 1903, № 49։

23 «Всероссийская политическая стачка в октябре 1905 г. (документы и материалы)». М.—Л., 1955, ч. I, с. 655, ч. 2, с. 495.

սերում էլ տրված ծանոթագրություններում հայ-ադրբեջանական ընդհարումների մեղավորներ են համարվում բացառապես ցարիզմը և դաշնակցությունը ու ոչ մի բառ չի ասվում ադրբեջանական ազգայնականների՝ սյանիսլամիստների մասին։

Այսպիսով, վերը շարադրվածից պարզ է դառնում, որ սովետահայ պատմագիտությունը զգալի աշխատանք է կատարել 1905—1907 թթ. հեղափոխական շարժումների պատմությունը հետազոտելու ուղղությամբ, սակայն դեռևս կան ոչ քիչ թվով հարցեր, որոնք կարիք ունեն խոր և բազմակողմանի գիտական ուսումնասիրության։

СОВЕТСКАЯ АРМЯНСКАЯ ИСТОРИОГРАФИЯ О РЕВОЛЮЦИОННЫХ ДВИЖЕНИЯХ В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В 1905—1907 гг.

ВЛАДИМИР БАРХУДАРЯН, ДЕРЕНИК МУРАДЯН, ПАВЛУШ АРУТЮНЯН

Резюме

Революционное движение 1905—1907 гг. в Восточной Армении стало предметом серьезного исследования советской армянской историографии фактически со второй половины 1950-х годов.

Начиная с 1955 г. вышло в свет множество научных работ, в том числе несколько монографий, сборников научных статей, сборников архивных документов и материалов, революционных воззваний и листовок. Благодаря этим исследованиям историков было выявлено и введено в научный оборот огромное количество документов и материалов, стали известны имена многих, незаслуженно забытых деятелей, рядовых героев революции.

История революционного движения Армении в 1905—1907 гг. и связанные с ним вопросы освещались также в обобщающих трудах по истории армянского народа и в очерках по истории коммунистических организаций Закавказья и Армении.

Однако несмотря на бесспорные достижения в изучении истории революционного движения в Армении, в изданиях прослеживаются некоторые недостатки, характерные почти для всех исследователей. В вышеуказанной литературе очень много общих суждений о революции вообще, порою исследователи не замечают и игнорируют местные особенности, мало уделяется внимания вопросам национально-освободительного движения в Армении. Необходимо также дополнительно изучить деятельность армянских буржуазных и мелкобуржуазных партий в начале XX века.